

ԱԶԳԱՅԻՆ ԳԱՆԶԱՐԱՆԻՑ՝ ՀԱՆՐՈՒԹՅԱՆԸ

Posted on May 4, 2024 by Keghart



Category: [Opinions](#)



Նառա Դանիելյան, Երևան, 26 ապրիլ 2024

Հայաստանի ազգային պատկերասրահը ներկայացնում է իր հավաքածուի մեծարժեք գանձերը՝ օրերս բացված «Մոդեռն ոճը» ցուցահանդեսում համադրելով 120 ստեղծագործություններ: Գեղարվեստում այս ուղղությունը ծնվել է 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին: Հիմքում գեղեցիկի գաղափարն է: Արվեստի այս ոճի նպատակն էր գեղագիտորեն իմաստավորել կյանքը, արվեստին հաղորդակցել կյանքի բոլոր ոլորտները, մարդուն դարձնել գեղարվեստական ամբողջության մասնիկ, արարել գեղեցիկի տիրույթներում: Նորարար (մոդեռն) ոճը յուրաքանչյուր երկրում արտահայտվեց գեղարվեստական ձևերի ու կատարողական ճարտարագործության (տեխնիկա) ինքնադրսևորմամբ: Հայ ազգային գեղանկարչության մեջ գեղարվեստական այս ուղղության լավագույն նմուշները Գեորգի Յակովլովի, Վարդգես Սուրենյանցի, Հակոբ Կոչոյանի, Հակոբ Գյուրջյանի, Մարտիրոս Սարյանի բարձրարժեք ստեղծագործություններն են, որոնցից նմուշներ ներկայացված են ցուցահանդեսում:

Հայաստանի ազգային պատկերասրահի տնօրեն տիկին Մարինա Հակոբյանը ցուցադրությունը յուրահատուկ է համարում. վերանորոգման աշխատանքների պատճառով պատկերասրահի ցուցասրահների մեծ մասը գրեթե չորս տարի փակ է եղել, և այս ցուցադրությունը լավագույն ցուցանմուշները ներկայացնելու հրաշալի առիթ է ընձեռել. «Այս ցուցադրությունում ընդգրկված են մեր մշտական ցուցադրության առանցքային, լավագույն, կարևորագույն ցուցանմուշները: Ազգային պատկերասրահի հավաքածուն ունի հայկական, եվրոպական, ռուսական կերպարվեստի և գեղագարդային (դեկորատիվ)-կիրառական արվեստի նորարար (մոդեռն) ոճին պատկանող հսկայական, հարստագույն հավաքածու: Այսօր վերջապես մենք հնարավորություն ունենք մեկ ցուցադրության շրջանակում շուրջ 120 ցուցանմուշով ներկայացնել այդ բազմակողմանի, ինքնատիպ, աներևակայելիորեն գեղեցիկ ուղղությունը»:



Առանձին սրահում ներկայացված են Վարդգես Սուրենյանցի, նաև Մարտիրոս Սարյանի վաղ շրջանի գործերը. վերջինները հատուկ այս ցուցադրության համար Ազգային պատկերասրահին է տրամադրել Սարյանի տուն-թանգարանի տնօրենությունը:

Այս համաժիրում ցուցադրվում են նաև ռուսական գեղանկարչության տարաբնույթ դպրոցները ներկայացնող նկարիչների, առաջատար վարպետների ստեղծագործություններ, ինչպես և եվրոպական այնպիսի անվանի վարպետների գործեր, ինչպիսիք են Ռընե Լալիկը և Էմիլ Գալլեն:



Մարինա Հակոբյան և Իրինա Բաղդամյան ցուցադրության բացմանը

Ցուցահանդեսի համադրող տիկին Իրինա Բաղդամյանի գնահատմամբ՝ հայ մեծանուն վարպետների արվեստը քաղաքակրթական տարբեր շերտերի կատարյալ ու ներդաշնակ համադրություն է. «Հայ նկարիչները միաձուլում են թե՛ եվրոպական և թե՛ ռուսական արվեստները: Հրաշալի գիտեն Արևելքի մշակույթը, նաև հենվում են մեր ազգային վիթխարի ժառանգության վրա: Այդ ամենի ներդաշնակությունը նրանց արվեստը դարձնում է շատ ինքնօրինակ»: Տիկին Բաղդամյանը հայտնում է, թե վերջին տասնամյակներում շատ են կազմակերպվում նորարար ոճին նվիրված ցուցահանդեսներ, կատարվում են ուսումնասիրություններ, լույս են ընծայվում այդ ուղղությանը նվիրված հրատարակություններ:

Ցուցադրությունն ամբողջացնում են հանրահայտ նկարիչներ Վալենտին Սերովի «Մ. Ակիմովայի դիմանկարը» և Վասիլի Կադինսկու «Արևելյան սյուիտ» գլուխգործոցները: Ցուցադրված են նաև գեղանկարչական տարբեր դպրոցների գրքային նկարազարդումների հրաշալի նմուշներ:



120

գեղանկար, գծանկար և գեղագարդային-կիրառական արվեստի ցուցանմուշներ մեկտեղած ինքնին յուրօրինակ այս ցուցադրությունը մեզ՝ այցելուներին, հնարավորություն է ընձեռում համեմատության մեջ տեսնել ազգային վարպետների առանձնահատկությունները գեղագիտական այս ուղղության շրջանակում, որն ակնբախ է իր մտահղացումների բազմազանությամբ: Սա ևս մեկ առիթ է մեծագույն հպարտությամբ ընդգծելու հայ արվեստագետի՝ աշխարհի ներկայակակին իր անշփոթելի կնիքը դրոշմելու հարակայությունը:

Հայաստանի ազգային պատկերասրահում ապրիլի 9-ին բացված «Մոդեռն ոճը» ժամանակավոր ցուցադրությունը բաց կլինի մինչև ընթացիկ տարվա մայիսի 5-ը: Հասցեն շատ հեշտ է հիշելը՝ Երևան, Հանրապետության հրապարակ, Պատմության պետական թանգարանի շենք (երգող շատրվանների հետևում):



There are no comments yet.